«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա - ՆԶՊ

Մասնակից - ավագ ենթասպա Կարեն Խաչատրյան

Ղեկավար - փոխգնդապետ Ա.Իսահակյան

Թեմա - XXI-դ ԴԱՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2023թ

Բովանդակություն

Ներածություն 3
Հիմնական մաս 5
Մաս 1 ՆԶՊ-նը և ժամանակակից մարտահրավերները 5
Մաս 2 Ուսուցման ակտուալությունը և օգտակարությունը 5
Մաս 3 ՆԶՊ-ունը այլ պետություններում 6
Մաս 4 Կրթական կարիքների բացահայտումը 8
Մաս 4.1 Հայրենասիրության գործոնը 8
Մաս 4.2 Տեսական մասի պրոբլեմները 9
Մաս 4.3 Նյութատեխնիկական կարիքները 11
Մաս 4.4 Գործնական պարապմունքների սակավությունը 11
Եզրակացություն 13
Օգտագործված գրականության ցանկը 15

Ներածություն

ՆԶՊ-նը համարվում է ամուր պետության հիմքը և երիտասարդների ազգային գիտակցության ձևավորման հիմնական գործոնը:

Հիմնական դրույթների ձևվավորումը,մարտավարության և ռազմական տեխնոլոգիա-ների ուսուցումը,հարկ եղած դեպքում սեփական անձի պաշտպանութը

համարվում է առարկայի հիմքը:

Ժամանակակից ՆԶՊ-նը դպրոցներում ունի ուսուցման հիմնական ստանդարտ կոնցեպցիան տեսական դասընդացների,գործնական պարապմունքների և լրացուցիչ Ֆակուլտատիվների ու խմբակների տեսքով:

Ուսուցման պրոցեսը բախկացած է մի շարք փուլերից:Սկզբնական շրջանում աշակերտը

ծանոթանում է ԶՈւ-րի և նրա խնդիրների հետ:Հաջորդող փուլերում ուսումնասիրվում են

համազորային կանոնագրքերը,կոչումները,զինվորական ծառայության անցկացման կարգը և փուլերը:Դրան հաջորդում են կրակային,շարային պատրաստությունները,մարտավարության հիմունքները,մարտի տակտիկական սկզբունքները:Այնուհետև միմյանց հաջորդում են ռազմական տեղագրությունը,անվտանգ կենսագործունեությունը և առաջին բուժօգնությունը:

Ինչպես կարող ենք նկատել,ՆԶՊ-նը մի յուրահատուկ առարկա է,որտեղ կա գիտելիքների բազմաժանրության հագեցվածություն,նրան հնարավոր չե դասել թե կոնկրետ հումանի-տար,թե ճժգրիտ առարկաների դասին:Եթե պատմության կամ մաթեմատիկայի դասին ուսուցիչը չի կարող թեմայից անել կես քայլ ձախ կամ աջ,ապա ՆԶՊ-ն դեպքում դասը հնարավոր է մատուցել շատ լայն ճակատով:

և վերջում ուսուցման ավարտական փուլում աշակերտները մասնակցում են գործնական դաշտային պարապմունքներին,որտեղ հնարավորություն են ստանում իրենց ստացած տեսական գիտելիքները կիրառել գործնական կերպով

(տեղագրություն,մարտավարու-

թյուն,կրակային,դիտարկում,դարանակալում,քողարկում,հետախուզություն և այլն):

Տեսական և գործնական դասերի արդյունքում աշակերտին հնարավորություն է տրվում լիովին ընկալել ՆԶՊ-յան ծրագիրը, ապագա ծառայության համար ստանալ որակյալ գիտելիքներ:Կազմելով բանակային կյանքի, մասին ընդհանուր պատկերացումներ, հեշտացվում է ոչ միայն նրա ապագա ծառայությունը,այլ նաև նրա ապագա հրամանատարների աշխատանքները:

Սակայն տարիների ընթացքում կուտակվել են բավականին խնդիրներ,կապված առարկան երեխաներին մատուցման հետ:Այդ խնդիրների շուտափույթ լուծումը այսօրվա պայմաններում պետական անվտանգության նշանակության հարց է:

Փորձենք բացահայտել այդ խնդիրները և միարժամանակ պարզաբանել նրանց ուղիղ կապը պետական անվտանգության հետ:

Հիմնական մաս

Մաս 1 ՆԶՊ-նը և ժամանակակից մարտահրավերները

XXI-դ դարում երկրի բոլոր բնագավառներում տեղի են ունենում լուրջ փոփոխություններ:
Դրանք բավական ազդեցություն են թողնում նաև կրդական համակարգի վրա,ստիպելով վերանայել կրթության համակարգի ավանդական սկզբունքները:Ընդ որում հիմնական դերն ու նշանակությունը տրվում է մատաղ սերնդի դաստիրակության կոնցեպցիային,հիմնված ազգային կարևորագույն արժեքների վրա:

Որպես հիմնախնդիր հանդես է գալիս հայրենասիրության և քաղաքացիականության դաստիրակությունը, որի կորիզն է հանդիսանում երիտասարդ սերնդների նախապատրաստումը հայրենիքի պաշտպանությանը և ծառայությանը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում:

Ներկա իրականության վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ հանրակրթական և նախնական մասնագիտական կրթական սիստեմները համարվում են ԶՈՒ-րի համալրման հիմնական աղբյուրը, հանձինս նրա շարքային մասը:

Մարդկության զարգացման պատմական փորձը վկայում է, որ պետության կայացման, զարգացման և կայունության բոլոր պարտադիր պայմաններից կարևորագույնը նրա ժողովուրդի անվտանգությունն է և պետականության պահպանումը: Բավարար չե ազատություն և անկախություն նվաճելը, դրանք պետք է պաշտպանել,ամրապնդել և փոխանցել հաջորդ սերնդներին:

Մաս 2 Ուսուցման ակտուալությունը և օգտակարությունը

ՆԶՊ-յան հիմունքները նպաստում են, որպիսի աշակերտի մոտ ոչ միայն ձևաորվի հայրենասիրության և ազգասիրության գաղափարները,այլ նաև պետության նկատմամբ սեփական անձի դերը: Իշնորհիվ առարկայի ձևավորվում է սեփական

արժանապատվության զգացմունքը,վստահությունը սեփական ուժերին,հայրենիքին օգտակար լինելու ցանկությունը: Լիարժեք ուսուցման շնորհիվ աշակերտը ստանում է բազմակողմանի գիտելիքներ ռազմական տարբեր բնագավառների վերաբերյալ:

Աշակերտի մոտ կազմավորվում է սեփական աշխարահայացքը,զարգանում է կարգապահության,ճշտապահության,պատասխանատվության զգացմունքները,արագ կողմնորոշ-վելու և խնդրին օպերատիվ լուծում տալու ունակությունը:

Ստացված գիտելիքները հետագայում անհրաժեշտ կլինեն նույն իսկ խաղաղ պայմաններում:Նրանք կարող են օգտագործվել առաջին բուժօգնություն ցուցաբերելիս թե ինքն իրեն, թե որևե մեկին:

Ոչ պակաս օգտակար են գիտելիքները օտար տարացքներում մոլորվելիս,որոնողական աշ-խատանքներ տանելիս,տարբեր տեսակի ստեղծված արտակարգ իրավիճակների ժամանակ, Ֆիզիկական առումով և իհարկե կամայական հատկանիշների ձևավորման գործում:

Մաս 3 ՆԶՊ-նը այլ պետություններում

Ներկա ժամանակներում աշխարհում երկրերի մեծամասնությունում ՆԶՊ-նը բացակայում է դպրոցական ծրագրերում: Հիմնականում դա այն երկրներն են,որոնք չունեն դրա անհրաժեշտությունը երկու հիմնական պատճառներով. **ա)** չունեն թշնամաբար տրամադրված հարևան պետություններ, **բ)** երկրի զինված ուժերը գտնվում են գերպրոֆեսիոնալ մակարդակի վրա:

Մի շարք երկրերում պատկերը հակառակն է, ՆԶՊ դիսցիպլինը համարվում է բազային և տեղ է գտել դպրոցական ծրագրերում:

Ղազախստանում և Բելորուսում նա կոչվում է «Նախազորակոչային պատրաստություն», Ուկրաինայում և Ղրղզստանում ԽՍՀՄ-ի փլուզումից հետո 2012-2014 թվականներին առարկայի ուսուցանումը դպրոցներում վերականգնվեց: Իսկ Հայաստանում, Ադրբեջանում և Ուզբեկստանում նա չեր էլ ընդհատվել:

Ստացվում է որ առարկան հիմնականում դասավանդվում է ԽՍՀՄ-ի նաղկին հանրապետություններում, որտեղ մինչ օրս առկա են վերոհիշյալ երկու կետերը. խնդիրներ հարևանների հետ և բարձրակարգ պրոֆեսիոնալ բանակի բացակայությունը:

Սակայն ոչ միայն նախկին ԽՍՀՄ-ի երկրերում է առարկան իր տեղը գտել. Զարմանալի է թե ոչ, բայց որպես չափանիշ այս գործում հանդես է գալիս Իսրաելը, որտեղ ՆԶՊ-յան ուսուցումը դպրոցներում սկսվում է 12-13 տարեկանից: Այնտեղ հիմնական շեշտը դրվում է գործնական պարապմունքների վրա:

Դասընդացները կազմակերպվում և կատարվում են այսպես կոչված «Երիտասարդական գումարտակների» կողմից: Պարապմունքների մեծ մասն անցկացվում է բաց երկնքի տակ ռազմականացված ուսումնական ճամբարներում:

Ծրագիրը կազմված է այնպես,որ մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների գործողական ունակություններին.նրանց հնարավորություն է տրվում իրենց վրա զգալ մարտական պայմանների դժվարություններն ու զրկանքները, մասնակցել մարտերի բեմականացված պաշտպանությանը, հարձակմանը և գրոհին, ինքնուրույն որոշումներ կայացնել, մի խոսքով լիարժեքորեն կիրառել լսարաններում ստացած տեսական գիտելիքները:

Ականատես լրագրողը նշում է թե, ինչպիսինն էին 13 ամյա աշակերտ ու աշակերտուհիների տպավորությունները, երբ նրանք դիտակետից հետևում էի, թե ինչպես է տափաստանով սլանում «Մերկավա» տանկը, կատարում բարդ վարժանքներ, ընթացքից թռիչքի պահին կրակում և ավարտին կտրուկ կանգ առնում նրանց արջև: Ցնցությունը դեռ առջևում էր, երբ այդ հսկայի միջից կատակելով և ծիծաղելով դուրս եկավ տանկի անձնակազմը՝ երիտասարդ աղջիկներ: Ձեզ ի՞նչպես է թվում, այդ պահին երեխաներից քանիսը որոշեցին դառնալ տանկիստ:

Տեղափոխվենք Եվրոպա: Այստեղ գրեթե ոչ մի երկիր առարկան դասավանդելու կարիքը պարզապես չունի՝ գերպրոֆեսիոնալ բանակ գումարած «Եվրոպական միություն»:

Սակայն Մեծ Բրիտանիայի օրինակի վրա պատկերացում կազմենք, թե ինչ է այն ու ամենայնիվ արվում այնտեղ: Համակրթական ծրագրում առարկան բացակայում է, սակայն այն դասավանդվում է որոշակի քոլեջներում և ռազմականացված դպրոցներում:

Մաս 4 Կրթական կարիքների բացահայտում

Հիմա ավելի մանրամասն կանգ առնենք նրա վրա, թե այսոր ՆԶՊ-յան շրջանակներում ինչ միջոցների, անելիքների և ձևափոխումների շնորհիվ հնարավոր կլիներ երեխաներին մատուցել շատ ավելի որակյալ գիտելիքներ և ավելի հետաքրքիր դարցնել նրանց համար առարկան:

Մաս 4.1 Հայրենասիրության գործոնը

Յուրաքանչուր երկիր իր պաշտպանունակությունը համարում է պետության կարևորագույն խնդիրը, ողջ ազգի պարտքը և նպատակը: Այստեղից էլ առաջ են գալիս մի շարք խնդիրներ երեխաների կրթական կարիքների վերաբերյալ և ՆԶՊ-ն առարկայի շրջանակներում:

Միանշանակ այստեղ առաջնահինը երեխաների մեջ հայրենասիրության գաղափարի սերմանումն է: **Ժամանակների փորձը ցույց է տվել որ, լոզունգային քարոզները, հորինված հերոսներն ու գրականությունը, ուրճեցված փաստերը, ճառերը, դրոշակավոր հանդեսները և ներշնչման այլ ձևերը չեն աշխատում**: Հայրենասիրությունը չի ներշնչվում, նրա ճիշտ և ճշմարիտ մատուցման դեպքում երեխան ինքը կգա դրան: Մի՞ թե երեխան իր աղքատ տունն ու աղքատ հորն ու մորը պակաս է սիրում: Իհարկե ոչ: Ընդհամենը պետք է օգնել նրան սիրել հայրենիքը ինչպես նույն հորն ու մորը:

Պետք է ստեղծել նպաստավոր պայմաններ, որ նա զգա, որ հայրենիքը հոգում և սիրում է իրեն, որ նա էլ է երկրի տերը, որ նա ունի ձայնի իրավունք և ընտրություն: Հոգացավություն ձեռք բերի տնկած ծառի,անիմաստ հոսող ջրի հանդեպ:

Ուստի երեխաների կրթական կարիքների ապահովման կարևորագույն նպատակն է նրանց ճիշտ ուղու վրա դնել, ճիշտ դաստիրակել: Իսկ ՆԶՊ-յան դեպքում հայրենասիրություն բառի դիմաց ավելանում է այդքան կարևոր «ռազմա» բառը:

Ռազմահայրենասիրության գաղափարի ամենաէֆեկտիվ մատուցման ձևրից մեկը դա տարբեր տեսակի միջոցառումների հաճախակի կազմակերպումն է: Այդ միջոցառումները կարելի է բաժանել մի քանի խմբերի.

ա) ռազմահայրենասիրական դաստիրակության գաղափարներ պարունակող համընդհանուր միջոցառումներ,

բ) ռազմահայրենասիրական դաստիրակական միջոցառումներ ավելի մասնագիտացված ուղղություններով, գործնական պարապմունքներով, մրցույթներով, խաղերի տեսքով,

գ) և ամենաարդյունավետ տեսակը դա կոմպլեքսային, վերոհիշյալ երկու ձևերի կոմբինացված միջոցառումներն են, որոնք անց են կացվու ռազմասպորտային ճամբարներում, ուսումնադաշտային հավաքներին, հայրենասիրական ակումբներում, զորամասերում:

Որպես հետևություն կարելի է ասել,որ,հատկապես XXI-դ դարում, երբ տեղի են ունենում արժեքահամակարգային խիստ ձևափոխումներ, երբ բավական շատ

պարագաներ բացասապես են ազդում երեխայի մտածելակերպի, ճաշակի, հոգեբանության, բարոյական հատկանիշների կազմավորման վրա, էլ ավելի կարևոր և հեղինակային է դառնում մատաղ սերնդի մեջ սերմանել, զարգացնել և պահպանել դարերից մեզ հանձնած սրբությունները, և առաջին հերդին սերն ու նվիրվածությունը ազգի և հայրենիքի հանդեպ:

ՆԶՊ-յան դասերին ստացած գիտելիքները որևը արժեք չեն կարող ունենալ, եթե նրանց հիմքում բացակայում են այդ զգացմունքները:

Մաս 4.2 Տեսական մասի պրոբլեմները

Երկրորդը, ինչի վրա կարիք կա ուշադրություն դարձնելու երեխաների կրթական կարիքների առումով, դա տեսական մասն է:

Արդեն նշեցինք, թե ինչ արագ տեմպերով է զարգանում գիտությունը, տարբեր տեսակի տեխնոլոգիաները և որքան արագ են նրանք կիրառվում ռազմական արդյունաբերությունում: Սակայն դասագրքերում բացարձակապես բացակայում են թեմաներ գերժամանակակից ռազմական զինատեսակների մասին:

Հասկանալի է, որ այդ ամենը ապագա սպան կուսումնասիրի ռազմական ԲՈՒՀ-երում, բայց մի՞ թե չկա անհրաժեշտություն այդ ամենի հետ, թեկուզ համառոտ կերպով ծանոթացնել դպրոցական աշակերտին:

Ռազմագիտության դասագրքերում բավական շատ դասաժամեր է հատկացվում պատմական էջերին, ռազմարվեստի պատմությանը: Ընդ որում այդ ամենը այս կամ այն ձևով աշակերտը ուսումնասիրում է պատմության ժամերին:

Շատ նոսր են տեղեկությունները ռազմական տեխնիկայի վերաբերյալ: Ամեն ինչ սահմանափակվում է տանկերի տեսակներով, նրա խոցելի տեղերով և նրան խոցող,

50-ից 60 տարի առաջ արտադրված զինատեսակներով:

Ցանկալի կլիներ գոնե մեկական ժամ ավելացվեր հրթիռահրետանային տեխնիկային, քիչ ավելի մանրամասն կանգ առնել ռազմական ավիացիայի վրա, և եթե չունենք օվկիանոսի կամ ծովի ափ, դա չի նշանակում, որ երեխան առարկան ուսումնասիրելիս բացարձակապես զրկվի ռազմածովային զորքերի մասին պատկերացում կազմելուց: Ես ապշած մնացի, երբ 9-դ դասարանի աշակերտը մոտեցավ ավիակրի պատկերին և դիմեց հարցով, թե սա ինչ է:

Դասագրքերը թարմեցվում են շատ ուշ, VIII և IX-դ դասարանի գրքերի հրատարակման տարեթիվն է 2014, ընդ որում իրենց նախորդներից չտարբերվող կամ տարբերվող դեպի վատը:

Շատ են թերությունները տպագրված մտքերի մեջ: Հարևան երկրերի զինատեսակների քանակի մասին բերվում են այնպիսի ստույկ թվեր, ինչպիսի տեղեկություններ չունի նույն իսկ մեր գլխավոր շտաբը:

IX-դ դասարանի շարային պատրաստության թեմայի մի մեծ մաս տառ առ տառ կրկնում է VIII-դ դասարանի մտքերը:

Հին ժամանակների հերոսամարտերին ծրագիրը հատկացրել է վեց դասաժամ, իսկ համազորային կանոնագրքերի կամ նույն շարային պատրաստուոյան թեմաներին ընդհամենը երեքական:

Բանակի համար շատ ավելի օգտակար կլիներ, եթե աշակերտները երկու դասաժամ միջազգային մարդասիրական իրավունքի տեղը երկու դաս ավել զենք քանդեին-հավագեին, իսկ VIII-դ դասարանում բացարձակապես ոչ անհրաժեշտ ազիմուտի որոշման տեղը և հարևան պետությունների զորաքանակ ու զորատեսակ անգիր անելու տեղը՝ մեկ ժամ ավել մարտավարություն սովորեին:

Դասագրքերից հանվեցին հիանալի թեմաներ հետախուզության և նրա տեսակների մասին, ինչը համոզված եմ շատ ավելի հետաքրքիր և օգտակար կլիներ ապագա զորակոչիկներին, քան ՆԶՊ-յան հետ ոչ մի կապ չունեցող անվտանգ կենսագործունեութունը (4 ժամ) և առաջի բուժօգնությունը (4 ժամ): Սրանք կարաին լինեին առանձին դիսցիպլին:

Մաս 4.3 Նյութատեխնիկական կարիգներ

Երեխաների կրական կարիքների վերաբերյալ հնարաոր չե կանգ չառնել նյութատեխնիկական կարիգներ վրա:

Վերջին անգամ մոտ տաս տարի առաջ է եղել, որ ռազմագիտության կաբինետը զինվեց (արդեն շարքից դուրս եկած) տեսասարքով և մի քանի անվորակ տեսասկավարակներով: Պետության, կրթության նախարարության, մարզպետարանների, քաղաքապետարանների և այլ ղեկավար կառույցների կողմից մեղմ ասած բավարար աջակցումը բացակայում է: Էլեմենտար օրինակ՝ տարիներ շարունակ մոտակա զորամասը, զինկոմիսարիատը և մի շարք կառույցներ խոստանում են կաբինետին նվիրել չորս համազորային կանոնագրքերը...

Շատ դպրոցներ մինչ այժմ չունեն հրաձգարաններ, կարիք կա ուսումնական նռնակների, ականների, փամփուշտների տեսակների, կողմնացույցի, զինվորի անհատական դեղատուփի և շատ ու շատ դիդակտիկ նմուշների, որոնց անհրաժեշտության ցուցակը զինկոմիսարիատները ամեն ուսումնական տարվա սկզբին պարտաճանանչ պահանջում են ներկայացնել:

Ես չեի ուզենա վիրավորել որևե առարկա, սակայն չեմ էլ կարող չասել, որ ՆԶՊ-նը որը որպես դիսցիպլին յուրովի է և առարկաների մեջ կանգնած է միայն իրեն պատկանող բարձրունքի վրա, այս տեմպերով առարկան շուտով կհավասարեցվի օժանդակ առարկաների շարքին. երգի դաս, կերպարվեստ, աշխատանքի ուսուցում:

Մաս 4.4 Գործնական պարապմունքների սակավությունը

Վերջապես ամենահուզիչ հարձերից մեկը դա գործնական դասերի տեսականու սակավությունն է: Խոսքը շարահրապարակում շարային պարապմունքների կամ հրաձգարանում (դպրոցների մեծ մասը չունի էլ) հրաձգության դաս անցկացնելու մասին չե:

Աշակերտների վրա շատ մեծ տպավորություն է թողնում ռազմական տեխնիկայի հետ գործնականորեն ծանոդանալը, անմիջապես զորամասերի բոկսերում բարձրանալ տանկերի վրա, զբաղեցնել անձնակազմի տեղերը, տեղում լսել մասնագետի բացատրությունները:

Պատկերացրեք, եթե հնարավոր լիներ զրահատեխնիկայի ուսումնավարժանքներին տանեինք նախազորակոչիկ տարիքի աշակերտներին (օրինակ Արմավիրի տանկային զորավարժարան), կամ երեխաները Երևանին հարակից ռազմական օդանավակայանում հետևեին կործանիչ և գրոհային ավիացիայի գործողություններին. թռիչք, վարժանքներ, վայրեջք: Կամ հետևեին,թե ինչպես է մոտոհրաձգային դասակը կամ վաշտը պաշտպանությունից անցնում հարձակման:

Միգուցե վերադասները կառարկեն, թե այս օրվա սուղ ճքնաժամային պայմաններում «դրա ժամանակը չե» և միգուցե նույն իսկ խելքին մոտ պատճառներ ներկայացնեն: Լավ, ասենք թե: Սակայն մի թե պրոբլեմային է երկու նախարարության համագործակցության միջոցով վերեվում նշվածի նկարահանումներ կատարել և տեսասկավարակների տեսքով բաժանել դպրոցներին: Համոզված եմ, դա հարյուր լիտր տանկի վառելիքի գին էլ չի կազմի: ԵՎ վերջապես կա անվճար ինտերնետ, որով նյութերը մեկ հպումով կհասցվի դպրոցներ:

Ամառային արձակուրդներին շատ երեխաներ հաճույքով այցելում են դպրոցի ՆԶՊ-յան խմբակ: Ցավալի է, որ չես կարողանում լիարժեք արդարացնես նրանց սպասումները. ավտոմատ քանդել հավագելուց, շարայինից մի երկու-երեք այլ ձանձրացրած վարժանքներ...

Եզրակացություն

Ներկա գեոքաղաքական փոփոխությունները և միջազգային լարվածությունը պետությունից պահանջում են զարգացնել պաշտպանութըան աստիճանը: Այդ գործնթացի անբաժան մասն է ապագա զինվորի կայացումը, որպես զինված ուժերի հիմք: Կախված նրանից, թե ինչ գիտելիքների և կարողությունների է նա տիրապետում արդեն նախազորակոչային տարիքում, կախված կլինի նրա արագ ադապտացումը ծառայության ընթացքում տեղի ունեցող կտրուկ փոփոխություններին:

Մանկավարժահոգեբանական և պատմական գրականության տեսական վերլուծությունները օգնել են բացահայտել ՆԶՊ-յան կայունացմանը և զարգացմանը նպաստող գործոնները XXI-դ դարի նախնական և հանրակրդական մասնագիտական կրթության սիստեմի մեջ:

Ուսումնասիրելով և վերլուծելով ՆԶՊ-յան կայունացման և զարգացման, ՆԶՊ-յան ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման փուլերու XXI-դ դարի ընդհացքում, հնարավոր է դառնում արձանագրել, որ նրա հիմնական խնդիրներն են.

ա. հանրակրթական օջախների սոցիալական դերի հզորացումը,

բ. ընդհանուր կրթության սիստեմում ՆԶՊ-յան դերի և տեղի կարևորության գիտակցումը,

գ. զինվորական պատրաստության բովանդակության, ձևերի, մեթոդների, ուսուցման տարբերակների կատարելագործումը,

դ. ՆԶՊ-յան որակյալ մասնագետների պատրաստման սիստեմի կատարելագործումը,

ե. ՆԶՊ-յուն դասավանդող մանկավարժների արժեքավորման, դերի, կարծիքն ու խորհուրդը հաշվի առնելու կարևորացումը:

Վերջնական եզրակացություն անելիս պետկ է նշել, որ եթե նույն իսկ բոլոր առաջացած խնդիրներին դպրոցներում լուծումներ տրվի, միևնույն է վերջնական արդյունք չի լինի, եթե խնդիրների հաղթահարումը չստանա գլոբալ, համակարգային մոտեցում:

Ճիշտը խոսենք, գերազանց դպրոցն ավարտածը, ընդունակությունների մեծ

պոտենցիալ ունեցողը իր ապագան կգերադասի կապել բժշկական, իրավաբանական և նմանատիպ մասնագիտությունների հետ, այլ ոչ թե ռազմական: Դեռ ԽՍՀՄ-ի ժամանակներից մինչ այսոր ռազմական կրթական հաստատությունների դիմորդների զգալի մասի գիտելիքների չափը մեղմ ասած միջինից ցածր է:

Դա նշանակում է, որ դպրոցական շրջանավարտին բանակը պիտի շահագրգռի իր առավելություններով, արտոնություններով և հնարավորութըուններով: Պարզ է, որ դա առաջին հերթին բարձր աշխատավարձն է, բնակարանային խնդրի լուծումը, հասարակական և սոցիալական արտոնությունթրը, լավ ծառայության դիմաց լուրջ խրախուսումները:

Հակառակ դեպքում հնարաոր չի լինի կանխել սպաների և պայմանագրայինների համատարած արտահոսքը բանակից դեպի «տաքսու վարորդներ»:

Վերադարնանք դպրոց: Խնդիրները շատ են, բարդ և բազմատեսակ: Պահանջվում է բավական ջանքեր: Ցանկություն, հոգացավություն, նվիրվածություն, մասնագիտական մոտեցում՝ սա են բուժման միակ դեղատեսակները:

Դասարանիս դռանը մուտքի կողմից փակցված է ցուցանակ, որին գրված է՝ «Հաղթանակները սկսվում են այստեղ». . . . . .խնդրում եմ օգնեկ մեզ հուսախափ չանել երեխաներին, շուտով ուշ է լինելու. . .

Օգտագործված գրականության ցանկը

1. https://fb-ru.turbopages.org/fb.ru/s/article/437482/nachalno-voennaya-podgotovka-programma-dlya-srednih-shkol-istoriya-razvitiya-i-stanovleniya?fbclid=IwAR00iEZgsttJXAJd1eOOo2chA0AYZO8RZ5RG08-_MqnOsWdxfzsbIShiQNE

2. https://mobile.studbooks.net/1199182/bzhd/vvedenie

3. ՆԶՊ առարկայի նոր ՀՊՉ